



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

# **Արդյունաբերական սեփականություն**

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

**No 3 (27)**

ՄԱՍ 1  
ЧАСТЬ 1

Агентство интеллектуальной собственности  
Республики Армения

**ПРОМЫШЛЕННАЯ  
СОБСТВЕННОСТЬ**

Официальный бюллетень

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են  
հրապարակված 2003 թվականի հոկտեմբերի 7-ից

Երեւան 2003

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՄԱՍ 1

ԳՅՈՒՏԵՐ .....	5, 85
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին .....	7, 87
ՕԳՏԱԿԱՐ ՍՈՂԵԼՆԵՐ .....	19, 99
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին .....	21, 101
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՍՈՒՇՆԵՐ.....	23, 103
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....	25, 105
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ .....	29
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին .....	31
ՑՈՒՑԻՉՆԵՐ .....	69
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	73
ԵՐԿՏԱՌ ԿՈՂԵՐԸ .....	106

### ՄԱՍ 2

ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ .....	5
Տեղեկություններ 1997թ-ին գրանցված ֆիրմային անվանումների հայտերի մասին. ....	7
Տեղեկություններ 1998թ-ին գրանցված ֆիրմային անվանումների հայտերի մասին. ....	8

Հրատարակվում է Մտավոր սեփականության  
գործակալության կողմից 1995թ.

Издается Агентством интеллектуальной  
собственности с 1995г.

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3  
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին  
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական  
ապահովման բաժին

375010, Երևան, Главный проспект, Дом Правительства 3  
Тел. 563-258 отдел приема заявок  
Тел. 561-126 отдел информационно-технологического  
обеспечения

Internet:<http://www.arnmpatent.org>  
E-mail: [arnmpat@cornet.am](mailto:arnmpat@cornet.am)

**СОДЕРЖАНИЕ****CONTENTS**

<b>ЧАСТЬ 1</b>		<b>PART 1</b>	
<b>ИЗОБРЕТЕНИЯ</b>	5, 85	<b>INVENTIONS</b>	
Сведения о выданных патентах	7, 87	Information on granted patents	
<b>ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ</b>	19, 99	<b>UTILITY MODELS</b>	
Сведения о выданных патентах	21, 101	Information on granted patents	
<b>ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ</b>	23, 103	<b>INDUSTRIAL DESIGNS</b>	
Сведения о выданных патентах	25, 105	Information on granted patents	
<b>ТОВАРНЫЕ ЗНАКИ</b>	29	<b>TRADE MARKS</b>	
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	31	Information on registered trade marks and service marks	
<b>УКАЗАТЕЛИ</b>	69	<b>INDEXES</b>	
<b>СООБЩЕНИЯ</b>	73	<b>REPORTS</b>	
<b>ДВУБУКВЕННЫЕ КОДЫ</b>	106	<b>TWO-LETTER CODES</b>	
 <b>ЧАСТЬ 2</b>		 <b>PART 2</b>	
<b>ФИРМЕННЫЕ НАИМЕНОВАНИЯ</b>	5	<b>TRADE NAMES</b>	
Сведения о зарегистрированных заявках фирменных наименований в 1997г.	7	Information on registered firm name's applica- tions in 1997.	
Сведения о зарегистрированных заявках фирменных наименований в 1998г.	8	Information on registered firm name's applica- tions in 1998.	

**ԳՅՈՒՏԵՐ**

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների  
նույնականացման միջազգային կոդերը  
ըստ ՄՄՅԿ ST.9 ստանդարտի**

- 11 *արտոնագրի համարը*
- 13 *փաստաթղթի տեսակի կոդը*
  - A1 *Գյուտի հիմնական արտոնագիր*
  - A2 *Գյուտի նախնական արտոնագիր*
  - B2 *Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր*
- 21 *հայտի համարը*
- 22 *հայտի ներկայացման թվականը*
- 23 *լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն*
- 24 *արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը*
- 31 *առաջնային հայտի համարը*
- 32 *առաջնային հայտի ներկայացման թվականը*
- 33 *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը*
- 42 *հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը*
- 44 *գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 45 *գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 51 *միջազգային արտոնագրային դասակարգման (ՄՄԴ) ցուցիչը(ները)*
- 54 *գյուտի անվանումը*
- 56 *տեղեկատվության աղբյուրներ*
- 57 *գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
- 62 *ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
- 65 *հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը*
- 71 *հայտատուն, երկրի կոդը*
- 72 *գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
- 73 *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
- 74 *արտոնագրային հավատարմատար*
- 85 *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
- 86 *միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը*
- 87 *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը*

## Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) 7 A01N 37/02 (11) 1323 (13) A2  
C07C 333/20
- (21) P20030005 (22) 20.01.2003  
(42) 11.03.2003
- (71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)
- (72) Վռան Դովլաթյան (AM), Ֆրունզե Ավետիսյան (AM), Թամարա Ջիվանշիրյան (AM), Մարգարիտա Դովլաթյան (AM), Սիրանուշ Հարությունյան (AM)
- (73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երևան, Տերյան 74 (AM)
- (54) Ֆունգիցիդային ակտիվությամբ S-բետա-ֆենօքսիէթիլթիոկարբամատ
- (57) Գյուտը վերաբերում է նոր քիմիական միացություններին, մասնավորապես՝  $C_6H_5-OCH_2CH_2-S-CS-NH_2$  բանաձևի S-բետա-ֆենօքսիէթիլթիոկարբամատին եւ կարող է կիրառվել գյուղատնտեսության մեջ որպես ֆունգիցիդ:
- Հայտարկվող միացությունը ստանում են երկմեթիլֆորմամիդի միջավայրում բետա-ֆենօքսիէթիլամիդի վրա ամոնիումի երկթիոկարբամատով ազդելով:
- Ընդլայնվում է ֆունգիցիդային ակտիվություն ունեցող միացությունների տեսականին:
- 
- (51) 7 A43D 1/02 (11) 1324 (13) A2  
G01B 3/08
- (21) P20020213 (22) 11.12.2002  
(42) 17.02.2003
- (71) Ալեքսան Արզումանյան (AM), Ջոհրաբ Մինասյան (AM), Հարություն Պեպելյան (AM), Աննա Սինոպյան (AM), Հմայակ Տիգրանյան (AM)
- (72) Ալեքսան Արզումանյան (AM), Ջոհրաբ Մինասյան (AM), Հարություն Պեպելյան (AM), Աննա Սինոպյան (AM), Հմայակ Տիգրանյան (AM)
- (73) Ալեքսան Արզումանյան, Գյումրի, Հ. Ղանդիլյան 47, բն. 5 (AM), Ջոհրաբ Մինասյան, Գյումրի, Աբովյան 129, բն. 10 (AM), Հարություն Պեպելյան, Գյումրի, Սպենդիարովի 12 (AM), Աննա Սինոպյան, Գյումրի, Իսահակյան 8, բն. 52 (AM), Հմայակ Տիգրանյան, Գյումրի, Խրիմյան Հայրիկի 54, բն. 2 (AM)
- (54) Ոտնաթաթաչափ
- (57) Գյուտը վերաբերում է կոշիկի արտադրության բնագավառին եւ կարող է կիրառվել ոտնաթաթի

մարդաչափական ճշգրիտ չափումներով կաղապարներ նախագծելու եւ պատրաստելու համար:

Սարքն ունի հարթակ եւ ոտնաթաթի երկայնական ուղղությամբ ուղղորդիչով տեղաշարժվելու հնարավորությամբ երկու կանգնակ, որոնցից յուրաքանչյուրի վրա տեղակայված է լայնական չափիչ ձողիկ կրող շարժական հորիզոնական բարձակ: Կանգնակների զագաթներին տեղակայված են անշարժ հորիզոնական բարձակներ եւ նրանց ծայրերը կապող ձող, որի վրա տեղակայված է ուղղաձիգ չափիչ ձող կրող շարժական սահնակ: Ոտքի կրունկի հատվածքում չափումներ կատարելիս անշարժ հորիզոնական բարձակները կարող են տեղակայվել հակառակ ուղղությամբ:

Ապահովվում է ոտքի մեկ տեղադրումով ոտնաթաթի մարդաչափական ճշգրիտ չափումների կատարումը մի քանի հաջորդական հատվածքներում, 4 նկ.:

- (51) 7 A61B 17/16 (11) 1325 (13) A2  
(21) P20020195 (22) 19.11.2002  
(42) 17.02.2003
- (71) Յուրի Պողոսյան (AM), Հայկ Ենոքյան (AM), Արեգ Սեայան (AM)
- (72) Յուրի Պողոսյան (AM), Հայկ Ենոքյան (AM), Արեգ Սեայան (AM)
- (73) Յուրի Պողոսյան, Երևան, Սունդուկյան Յա, բն.17(AM), Հայկ Ենոքյան, Երևան, Ն.Նորքի 5-րդ զանգված, Գալշոյան 12, բն.1ա (AM), Արեգ Սեայան, Երևան, Դեմիրճյան 27, բն.8 (AM)
- (54) Խողովակավոր պտուտակամեխ ճակատային եւ վերին ծնոտային ծոցերի հիվանդությունների ախտորոշման եւ կոնսերվատիվ բուժման համար
- (57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես ճակատային եւ վերին ծնոտային ծոցերի հիվանդությունների ախտորոշմանն ու բուժման գործիքներին եւ կարող է կիրառվել քթի, կոկորդի, ականջի հիվանդությունների բուժման եւ դիմաձնոտային վիրաբուժության մեջ:
- Խողովակավոր պտուտակամեխն ունի գլխիկ, պարուրակավոր հատված եւ առանցքային անցք: Ընդ որում, առանցքային անցքը գլխիկի կողմում ունի պարուրակավոր հատված

եւ դրա մեջ ներպտուտակվող պտուտակ՝ առանցքային անցքը հերմետիկորեն փակելու հնարավորությամբ:

Բացառվում է վարակի ներթափանցումը հյուսվածքների խորքը, եւ ապահովվում է խողովակավոր պտուտակամեխի կայուն ամրակցումը ծոցի պատին, 4 նկ.:

- (51) 7 A61B 17/34 (11) 1326 (13) A2
- (21) P20020193 (22) 19.11.2002
- (42) 17.01.2003

(71) Յուրի Պողոսյան (AM), Յայկ Ենոքյան (AM), Արեգ Սեպյան (AM)

(72) Յուրի Պողոսյան (AM), Յայկ Ենոքյան (AM), Արեգ Սեպյան (AM)

(73) Յուրի Պողոսյան, Երեւան, Սունդուկյան 3ա, բն.17 (AM), Արեգ Սեպյան, Երեւան, Դեմիրճյան 27, բն.8 (AM), Յայկ Ենոքյան, Երեւան, Նոր Նորքի 5-րդ զանգված, Գալշոյան 12, բն.1ա (AM)

(54) Ֆրոնտիտների ախտորոշման եւ/կամ կոնսերվատիվ բուժման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է օտարինալարին գոլոգիային եւ դիմածնոտային վիրաբուժությանը, մասնավորապես, ֆրոնտիտների ախտորոշման եւ/կամ կոնսերվատիվ բուժման եղանակների:

Նախապես կատարում են հիվանդի ճակատային ծոցի ռենտգենային հետազոտություն, ապա տեղային ներսփռական անզգայացումից հետո կատարում մաշկային ծածկույթների կտրվածք՝ համապատասխան կողմի հոնքի միջային երրորդականի պրոյեկցիայով: Կտրվածքի երկարությունը 0,8-1,0 սմ է: Վերքը խորացնում են մինչ ոսկր՝ հատելով վերնոսկրը: Ոսկրը բորով շաղափում են, ստացված անցքի մեջ ներպտուտակում սնամեջ պտուտակամեխը, որի անցքի միջով մտցնում են ներարկոցի ասեղը եւ կատարում ասեղնածակում, լվացում կամ անհրաժեշտ դեղանյութերի ներմուծում: Միջամտության ավարտից հետո փակում են պտուտակամեխի անցքը՝ վերացնելով ճակատային ծոցի եւ արտաքին աշխարհի միջեւ հաղորդականությունը:

Ապահովվում է ֆրոնտիտների ախտորոշման եւ/կամ կոնսերվատիվ բուժման եղանակի արդյունավետությունը:

- (51) 7 A61B 17/34 (11) 1327 (13) A2
- (21) P20020194 (22) 19.11.2002
- (42) 17.01.2003

(71) Յուրի Պողոսյան (AM), Արեգ Սեպյան (AM), Յայկ Ենոքյան (AM)

(72) Յուրի Պողոսյան (AM), Արեգ Սեպյան (AM), Յայկ Ենոքյան (AM)

(73) Յուրի Պողոսյան, Երեւան, Սունդուկյան 3ա, բն.17 (AM), Արեգ Սեպյան, Երեւան, Դեմիրճյան 27, բն.8 (AM), Յայկ Ենոքյան, Երեւան, Ն.Նորքի 5-րդ զանգված, Գալշոյան 12, բն.1ա (AM)

(54) Յայնորիտների ախտորոշման եւ/կամ կոնսերվատիվ բուժման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է օտարինալարինգոլոգիային եւ դիմածնոտային վիրաբուժությանը, մասնավորապես, հայնորիտների ախտորոշման եւ/կամ կոնսերվատիվ բուժման եղանակներին:

Տեղային ներսփռական անզգայացումից հետո կատարում են 10-12մմ երկարությամբ երկայնակի կտրվածք մինչեւ անցման ծալք, այտային թմբից 7-10մմ առաջ, ռասպատորի օգնությամբ մերկացնում են վերին ծնոտային ծոցի առաջակողմային պատը եւ բորով շաղափում են անցք, որի մեջ ներպտուտակում են սնամեջ պտուտակամեխ: Պտուտակամեխի խողովակով վերին ծնոտային ծոցի մեջ մտցնելով ասեղը՝ կատարում են ասեղնածակում, լվացում կամ անհրաժեշտ դեղանյութերի ներմուծում: Միջամտության ավարտից հետո փակում են պտուտակամեխի անցքը՝ դրանով իսկ վերացնելով բերանի խոռոչի եւ վերին ծնոտային ծոցի միջեւ հաղորդականությունը:

Ապահովվում է հայնորիտների ախտորոշման եւ/կամ կոնսերվատիվ բուժման եղանակի արդյունավետությունը:

- (51) 7 A61D 7/00 (11) 1328 (13) A2
- A61K 31/00
- A61P 1/14

(21) P20030003 (22) 15.01.2003

(42) 11.03.2003

(71) Գայանե Պետոյան (AM), Ալբերտ Մանասյան (AM)

(72) Գայանե Պետոյան (AM), Ալբերտ Մանասյան (AM)

(73) Գայանե Պետոյան, Երեւան, Նորք, 17-րդ փող., 1-ին նրբ., 12 (AM), Ալբերտ Մանասյան, Երեւան, Բաբայան 34, բն.35 (AM)

(54) Դեղագործական պատրաստուկ դիսպեպսիայով հիվանդ նորածին հորթերի բուժման համար

(57) Գյուտը վերաբերում է անասնաբուժությանը, մասնավորապես, դեղագործական պատրաստուկներին, որոնք կարող են կիրառվել դիսպեպսիայով հիվանդ նորածին հորթերի բուժման համար:

Յայտարկվում է դեղագործական պատրաստուկ, որը ներառում է նատրիումի քլորիդ, կալցիումի գլյուկոնատ, մագնեզիումի սուլֆատ,

նատրիումի սելենիտ, գլյուկոզա, ասկորբինաթթու, օքսիտետրացիկլին եւ էլեուտերոկոկկի լուծանգուք, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ, զանգվ. %.

նատրիումի քլորիդ	1,0
կալցիումի գլյուկոնատ	0,5
մագնեզիումի սուլֆատ	0,5
նատրիումի սելենիտ	0,001
գլյուկոզա	5,0
ասկորբինաթթու	0,05
օքսիտետրացիկլին	0,025
էլեուտերոկոկկի լուծանգուք	0,2
եռացրած ջուր	մնացածը:

Ապահովվում է դիսպեպսիայով հիվանդ նորածին հորթերի բուժման արդյունավետությունը:

- (51) 7 A61K 9/68 (11) 1329 (13) A2  
A23G 3/30
- (21) P20020202 (22) 29.11.2002  
(42) 17.01.2003  
(71) Վահրամ Գաբզիմայան (AM)  
(72) Վահրամ Գաբզիմայան (AM)  
(73) Վահրամ Գաբզիմայան, Երեւան, Արցախի 1,բն.32 (AM)  
(54) Բուժիչ-կանխարգելիչ ազդեցությամբ մաստակների ստացման եղանակ  
(57) Գյուտը վերաբերում է մաստակների արտադրությանը, մասնավորապես՝ բուժիչ-կանխարգելիչ ազդեցություն ունեցող մաստակների ստացման եղանակներին:

Տաքացված հիմքը խառնում են մաթի հետ (1.0-1.01):(1.02-1.03) հարաբերակցությամբ, ստանում համասեռ զանգված, որին ավելացնում են շաքարի փոշու ընդհանուր քանակի երեք չափաբաժնից երկուսը: Մինչեւ շաքարի փոշու 3-րդ չափաբաժնի ավելացումը, պատրաստում են գլիցերինի եւ գործող նյութի խառնուրդ, որը խառնում են հիմքի, մաթի եւ շաքարի փոշու խառնուրդի հետ: Ստանում են համասեռ զանգված, որին ավելացնում են շաքարի փոշու 3-րդ չափաբաժնի եւ անուշահոտ նյութեր:

Շաքարի փոշու եռանվազ ներմուծումը ապահովվում է բուժիչ-կանխարգելիչ ազդեցությամբ մաստակներում գործող նյութի համաչափ բաշխումը:

- (51) 7 A61K 9/68 (11) 1330 (13) A2  
A23G 3/30

- (21) P20020201 (22) 29.11.2002  
(42) 17.01.2003  
(71) Վահրամ Գաբզիմայան (AM)  
(72) Վահրամ Գաբզիմայան (AM)  
(73) Վահրամ Գաբզիմայան, Երեւան, Արցախի 1,բն.32 (AM)  
(54) Բուժիչ-կանխարգելիչ ազդեցությամբ մաստակների ստացման եղանակ (տարբերակներ)  
(57) Գյուտը վերաբերում է մաստակների արտադրությանը, մասնավորապես՝ բուժիչ-կանխարգելիչ ազդեցությամբ հաբավորված մաստակների ստացման եղանակներին:

Նախապես տաքացված խառնիչում խառնում են հիմքը, գլիցերինը եւ գործող նյութը, մինչեւ համասեռ զանգվածի ստացումը: Առանձին խառնում են շաքարի փոշին եւ դեքստրոզան: Ստացված երկու խառնուրդները խառնում են, ստանում են չոր, փխրուն զանգված, որին ավելացնում են անուշահոտ նյութեր եւ կիտրոնաթթու: Ստացված զանգվածի մանրումը եւ հաբավորումը կատարում են 12-15 մթնոլորտ ճնշման եւ 30-40°C ջերմաստիճանի պայմաններում:

Եղանակի 2-րդ տարբերակում շաքարի փոշին ավելացնում են 2 չափաբաժնով: Առաջին չափաբաժնի ավելացում են նախապես տաքացված հիմքին, ապա խառնում գլիցերինի եւ գործող նյութի հետ: Ստացված խառնուրդին ավելացնում են շաքարի փոշու 2-րդ չափաբաժնի:

Պարզեցվում է բուժիչ-կանխարգելիչ ազդեցությամբ մաստակների ստացման եղանակը, 2 անկախ կետ:

- (51) 7 A61M 29/00 (11) 1331 (13) A1  
(21) P20010066 (22) 22.05.2001  
(42) 17.10.2001  
(31) 09/575957 (32) 23.05.2000 (33) US  
(71) Մեդիմոլ Լթդ.(IL)  
(72) Յակոբ Ռիխտեր (IL), Գրեգրի Փինչասիք (IL)  
(73) Մեդիմոլ Լթդ.(IL)  
(74) Յ. Դավթյան  
(54) Կողմնային ճյուղային անցքով երկատված ստենտ եւ դրա պատրաստման եղանակ  
(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային, մասնավորապես՝ արյունատար անոթները փակող երկատված ստենտներին:

Ստենտը պատրաստված է թերթից, որն ունի երկայնական առանցք, առաջին տեղամաս եւ երկրորդ տեղամաս: Առաջին տեղամասն ունի մերձագույն ծայր եւ հեռագույն ծայր, առաջին կողմնային կող եւ երկրորդ կողմնային կող, ընդ որում առաջին տեղամասի կողմնային



կողերն ըստ էության զուգահեռ են երկայնական առանցքին եւ գտնվում են միմյանցից առաջին հեռավորության վրա: Երկրորդ տեղամասն ունի մերձագույն ծայր եւ հեռագույն ծայր, առաջին կողմնային կող եւ երկրորդ կողմնային կող, ընդ որում երկրորդ տեղամասի կողմնային կողերն ըստ էության զուգահեռ են երկայնական առանցքին եւ գտնվում են միմյանցից երկրորդ հեռավորության վրա, որն ավելի փոքր է առաջին հեռավորությունից: Երկրորդ տեղամասի մերձագույն ծայրը միացված է առաջին տեղամասի հեռագույն ծայրի հետ: Առաջին տեղամասի առաջին կողմնային կողը միակցված է առաջին տեղամասի երկրորդ կողմնային կողի հետ, երկրորդ տեղամասի առաջին կողմնային կողը միակցված է երկրորդ տեղամասի երկրորդ կողմնային կողի հետ՝ ստեղծելով համար: Առաջին տեղամասի հեռագույն ծայրի մասը եւ երկրորդ տեղամասի մերձագույն ծայրի մասը ձեւավորում են ստեղծի կողմնային ճյուղային անցքը, 6 անկախ կետ, 34 նկ.:

- (51) 7 A61M 29/02 (11) 1332 (13) A1
- (21) P20010070 (22) 04.06.2001
- (42) 17.10.2001
- (31) 09/587994 (32) 06.06.2000 (33) US
- (71) Մեդիմոլ Լթդ.(IL)
- (72) Յակոբ Ռիխտեր (IL), Գրեգորի Փինչասիք (IL)
- (73) Մեդիմոլ Լթդ.(IL)
- (74) Հ. Դավթյան

(54) Օձածեւ ոլորված աստիճանավոր ստեղծող  
 (57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային, մասնավորապես՝ էնդոպրոթեզներին, որոնք նախատեսված են անոթները բաց պահելու կամ անոթներում այլ պրոթեզներ ամրացնելու եւ պահելու համար:

Ստեղծում ունի օղակածեւ գալարների շարքի վրա պարուրածեւ ոլորված շերտ, որն ունի առնվազն երկու կողմնային ժապավեն: Ժապավենները կապված են լայնական միջակայքի միջոցով: Լայնական միջակայքերը կարող են դասավորվել մի փոքր շեղումով: Յուրաքանչյուր կողմնային ժապավենն ունի օձածեւ նախշանկարներ՝ ծովածքների շարքերով: Ստեղծի ընդարձակման ժամանակ կողմնային ժապավենների ծովածքները բացվում են՝ մեծացնելով յուրաքանչյուր առանձին բջջի երկարությունը պտուտակային ուղղությամբ՝ թույլ տալով ստեղծի ընդարձակվել առանց ոլորվածքի որել: Առանկալի քանդման, 3 անկախ կետ, 8 նկ.:

- (51) 7 A61N 1/32 (11) 1333 (13) A1
- A61M 31/00
- (21) P20000065 (22) 25.07.2000
- (42) 19.01.2001
- (31) 09/360893 (32) 26.07.1999 (33) US
- (71) Ջյուլի ԴՆԼԴԻՆԳՍ Լթդ.(IL)
- (72) Յակոբ Ռիխտեր (IL)
- (73) Ջյուլի ԴՆԼԴԻՆԳՍ Լթդ.(IL)
- (74) Հ. Դավթյան

(54) Մարմնի հյուսվածքի բուժման եղանակ (տարբերակներ) եւ դրա իրագործման սարքավորում (տարբերակներ)  
 (57) Գյուտը վերաբերում է անասունի կամ մարդու մարմնում ներդրվող սարքերին՝ տրված հյուսվածքին թերապեւտիկ օգնություն ցույց տալու համար, մասնավորապես՝ մարմնի հյուսվածքների կամ օրգանների ընտրովի էլեկտրական խթանման կամ դեղամիջոցը տրված տարածք հասցնելու սարքին եւ եղանակին:

Էլեկտրական էներգիան կամ դեղամիջոցը մարմնի հյուսվածքին կամ օրգանին հասցնելու թերապեւտիկ սարքավորում եւ եղանակ, որն օգտագործում է անդրաձայնային տատանումներ եւ առաջ է բերում բուժման ենթակա մարմնի օրգանում կամ հյուսվածքում ներդրված սարքի կողմից էլեկտրական հոսանքի կամ դեղամիջոցի արտամղում դեպի տրված տարածք: 9 անկախ կետ, 7 նկար:

- (51) 7 B01J 20/26 (11) 1334 (13) A2
- C08F 212/14
- (21) P20020191 (22) 18.11.2002
- (42) 17.01.2003
- (71) Մարգարիտա Մացոյան (AM)
- (72) Մարգարիտա Մացոյան (AM)
- (73) Մարգարիտա Մացոյան, Երեւան, Կորյունի 5, բն. 31 (AM)

(54) Կոմպլեքսագոյացնող իմիդազոլային կամ բենզիմիդազոլային խումբ պարունակող պոլիմերային կլանիչներ՝ ծանր մետաղները կապելու եւ օրգանիզմից դուրս բերելու  
 (57) Գյուտը վերաբերում է պոլիմերային քիմիային, մասնավորապես՝ ստիրոլի եւ երկվինիլբենզոլի հիմքով իմիդազոլային կամ բենզիմիդազոլային խումբ պարունակող համապոլիմերային կլանիչներին, որոնք կարող են կիրառվել ծանր մետաղները կապելու եւ օրգանիզմից դուրս բերելու համար:

Կլանիչը ստանում են հետեւյալ կերպ: Ստիրոլի եւ երկվինիլբենզոլի քլորմեթիլավորված համապոլիմերը ամիմավորում են՝ ավելացնելով իմիդազոլ կամ բենզիմիդազոլ:

Ստացվում են անլուծելի, կայուն, կոմպլեքսագոյացնող բարձր ակտիվություն ունեցող համապոլիմերներ:

- (51) 7 B01J 20/26 (11) 1335 (13) A2  
C08F 212/14
- (21) P20020192 (22) 18.11.2002
- (42) 17.01.2003
- (71) Մարգարիտա Մացոյան (AM), Միխայիլ Աղաջանով (AM)
- (72) Մարգարիտա Մացոյան (AM), Միխայիլ Աղաջանով (AM)
- (73) Մարգարիտա Մացոյան, Երեւան, Կորյունի 5, բն. 31 (AM), Միխայիլ Աղաջանով, Երեւան, Մ.Ջերաջու 18, բն.34 (AM)
- (54) Կոմպլեքսագոյացնող պիրազոլային խումբ պարունակող պոլիմերային կլանիչ՝ ծանր մետաղները կապելու եւ օրգանիզմից դուրս բերելու համար
- (57) Գյուտը վերաբերում է պոլիմերային քիմիային, մասնավորապես՝ ստիրոլի եւ երկվինիլբենզոլի հիմքով պիրազոլային խումբ պարունակող համապոլիմերային կլանիչին, որը կարող է կիրառվել ծանր մետաղները կապելու եւ օրգանիզմից դուրս բերելու համար:  
Կլանիչը ստանում են երկվուլ սինթեզով: Առաջին փուլում ստիրոլի եւ երկվինիլբենզոլի համապոլիմերը քլորմեթիլավորում են, իսկ երկրորդ փուլում քլորմեթիլավորված բաղադրամասը ամինավորում են ավելացնելով 3(5)-մեթիլպիրազոլ:
- Ստացվում է անլուծելի, կայուն, կոմպլեքսագոյացնող բարձր ակտիվություն ունեցող համապոլիմեր:

- 
- (51) 7 B28D 5/00 (11) 1336 (13) A2  
C30B 33/00
  - (21) P20020207 (22) 05.12.2002
  - (42) 17.02.2003
  - (71) «Նանոտեխ» ՍՊԸ (AM)
  - (72) Գագիկ Բղդոյան (RU), Գագիկ Խաչատրյան (AM), Ռուբեն Բաղդասարյան (AM), Նունե Չակոբյան (AM), Վահան Ավետիսյան (AM)
  - (73) «Նանոտեխ» ՍՊԸ, Երեւան, Ե. Թադևոսյան 12/5, բն. 11 (AM)
  - (54) Քվարցի թիթեղների մշակման եղանակ
  - (57) Գյուտը վերաբերում է կիսահաղորդչային սարքերի եւ ինտեգրալ միկրոսխեմաների արտադրության տեխնոլոգիային, մասնավորապես, քվարցի թիթեղների մեխանիկական եւ քիմիական մշակմանը:  
Ըստ եղանակի հաջորդաբար կատարում են թիթեղների եզրերի նախնական կլորացում, թիթեղների լվացում եւ չորացում, կատարում թիթեղների երկկողմանի նախնական հղկում սիլիցիումի կարբիդի մանրափոշով, ապա մաքրում անդրաձայնային եղանակով: Այնուհետեւ հաջորդաբար կատարում են երկրորդ լվացում, թիթեղների եզրերի վերջնական

կլորացում, թիթեղների երրորդ լվացում եւ չորացում: Ապա թիթեղները սոսնձում են փոխովի սկավառակներին եւ կատարում թիթեղների միակողմանի նուրբ հղկում էլեկտրակորունդի մանրափոշով, որից հետո կատարում են սոսնձված թիթեղներով սկավառակների անդրաձայնային եղանակով մաքրում “Արիել” լվացող փոշու 10գ/լ ջրային լուծույթում 50°C ջերմաստիճանում 10 րոպեի ընթացքում, ապա խածատում ալկալու (NaOH կամ KOH) 20%-անոց ջրային լուծույթի մեջ 50-60°C ջերմաստիճանում 6 րոպեի ընթացքում: Այնուհետեւ թիթեղները ողորկում են, պոկում սկավառակներից եւ կատարում քիմիական մշակում:  
Բարձրացվում է պրոցեսի արտադրողականությունը եւ քվարցի թիթեղների որակը, 1 նկ.:

- 
- (51) 7 B62D 11/10 (11) 1337 (13) A2  
(21) P20020187 (22) 13.11.2002  
(42) 17.02.2003
  - (71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)
  - (72) Նորիկ Բագիկյան (AM), Գրիգորի Մանասարյան (AM), Գայանե Շահնազարյան (AM)
  - (73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երեւան, Տերյան 74 (AM)
  - (54) Լայնական թեքություններում աշխատող անվավոր մեքենայի տեղաշարժման հետագծի կայունացման համակարգ
  - (57) Գյուտը վերաբերում է ավտոտրակտորաչինությանը, մասնավորապես միջանիվային ատամնանվակավոր դիֆերենցիալներին:  
Համակարգը բաղկացած է կենտրոնական տարվող ատամնանիվներից, դիֆերենցիալից, որն ունի իրան, երկու երկակի սատելիտներ, երկու լիսեռներ եւ տարբեր տրամագծի ատամնանիվներ, ճնշման խողովակաշարից, մղակային բաժանարարներից, թափող խողովակաշարերից եւ զսպանակատակ մխոցներով հիդրոկուտակիչներից:  
Բարձրանում է համակարգի աշխատանքի արդյունավետությունը, նկ. 4:

- 
- (51) 7 B67B 7/16 (11) 1338 (13) A2  
(21) P20020181 (22) 07.11.2002  
(42) 17.01.2003
  - (71) Մանուկ Մարգարյան (AM)
  - (72) Մանուկ Մարգարյան (AM)
  - (73) Մանուկ Մարգարյան, Երեւան, Վ. Փափազյան 2-րդ նրբ. 133 (AM)
  - (54) Շշի խցանահան
  - (57) Գյուտը վերաբերում է շշի խցանահաններից եւ կարող է օգտագործվել սննդի արդյունաբերությունում:

Շշի խցանահանն ունի բռնակ, հենվող մաս եւ սուր ծայր: Ընդ որում խցանահանը պատրաստված է շշի տակի արտաքին մակերեսի վրա գտնվող փորվածքի տեսքով եւ շշի հետ կազմում է մեկ ամբողջություն:

Չեշտացվում է շշի խցանը հանելու հարմարությունը, վերանում է առանձին խցանահան ունենալու անհրաժեշտությունը, 3 նկ.:

- (51) 7 C01B 33/12 (11) 1339 (13) A2
- (21) P20020142 (22) 12.08.2002
- (42) 17.10.2002
- (71) ՀՀ ՊԱԱ Ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտ (AM)
- (72) Նշան Ջուլումյան (AM), Էմմա Հովհաննիսյան (AM), Սուրեն Կարախանյան (AM), Թամարա Հովսեփյան (AM), Աիդա Ղազանչյան (AM), Ջարուհի Հովհաննիսյան (AM)
- (73) ՀՀ ՊԱԱ Ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտ, Երևան, Արդուբայանի 2-րդ
- (54) Լուծելի սիլիկաթթվի ստացման եղանակ
- (57) Գյուտը վերաբերում է անօրգանական քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ գերհիմնային ապարներից լուծելի սիլիկաթթվի ստացման եղանակներին, որը կարող է կիրառվել որպես կաղապարման նյութ մետաղագործության մեջ, սիլիկաժելային կլանիչ, լցանյութ եւ այլն:  
Սերպենտինիտը շիկացնում են 640-680°C ջերմաստիճանում, որից հետո մշակում 4-10%-անոց աղաթթվի լուծույթով 85-95°C ջերմաստիճանում 3-5 րոպեի ընթացքում, աղաթթու: սերպենտինիտ՝ (15-40) : 1 զանգվ. հարաբերակցությամբ, ապա սիլիկաթթուն անջատում լուծույթից քամելով:  
Պարզեցվում եւ էժանացվում է պրոցեսը:

- (51) 7 C04B 24/24 (11) 1340 (13) A2
- (21) P20020210 (22) 09.12.2002
- (42) 17.02.2003
- (71) Անահիտ Տոնոյան (AM), Արտուր Ավետիսյան (AM)
- (72) Վարդան Խաչատրյան (AM), Գեւորգ Ավետիսյան (AM)
- (73) Անահիտ Տոնոյան (AM), Արտուր Ավետիսյան (AM)
- (74) Ա. Պետրոսյան
- (54) Կապակցող բաղադրանյութ
- (57) Գյուտը վերաբերում է բարձրամոլեկուլային միացություններ, մասնավորապես, իզոպրենային կաուչուկի լատեքս պարունակող կապակցող բաղադրանյութերին եւ կարող է կիրառվել բետոնի, ասֆալտի եւ այլ շինարարական նյութերի ստացման համար:

Կապակցող բաղադրանյութը պարունակում է իզոպրենային կաուչուկի լատեքս, «999» մակնիշի լաքաներկային լուծիչ եւ նավթամթերք՝ բենզին կամ կերոսին, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ, զանգվ.%՝

իզոպրենային կաուչուկի	
լատեքս	55 – 75
նավթամթերք	20 – 32
լաքաներկային լուծիչ «999»	3 – 15

Ընդլայնվում է կապակցող բաղադրանյութի տեսականին:

- (51) 7 C07K 5/023 (11) 1341 (13) A1
- A61K 38/06
- (21) 97005 (22) 16.06.1995
- (86) PCT/US95/07617, 16.06.1995
- (85) 16.01.1997
- (87) WO 95/35308 28.12.1995
- (42) 08.08.2000
- (31) 08/261,452 (32) 17.06.1994 (33) US
- 08/405,581 17.03.1995 US
- 08/440,898 25.05.1995 US
- (71) Վերթեքս Ֆարմասյութիքլզ, Ինք (US)
- (72) Գայ Բենիս (US), Ջուլիան Գուլբեք (GB), Դեվիդ Լաուֆեր (US), Մայքլ Մալիքան (US), Մարկ Մուրքո (US), Դեվիդ Լիվինգսթոն (US)
- (73) Վերթեքս Ֆարմասյութիքլզ, Ինք.(US)
- (74) Հ. Մանուկյան
- (54) Ինտերլեյկին-1-բետա փոխակերպող ֆերմենտների արգելակիչներ
- (57) Գյուտը վերաբերում է ինտերլեյկին-1-բետա փոխակերպող ֆերմենտների արգելակիչներ հանդիսացող քիմիական միացությունների նոր դասին: Ինտերլեյկին-1-բետա փոխակերպող ֆերմենտների արգելակիչներն ունեն յուրահատուկ կառուցվածքային եւ ֆիզիկաքիմիական հատկություններ: Գյուտը վերաբերում է նաեւ այդ միացությունները որպես արդյունավետ նյութներառող դեղագործական բաղադրանյութերին, որոնք արգելակելով ինտերլեյկին-1-բետա փոխակերպող ֆերմենտների ակտիվությունը՝ կարող են արդյունավետ կիրառվել ինտերլեյկին-1-բետա-ով միջնորդված հիվանդությունների (այդ թվում՝ վարակային, ինքնահիմունային եւ նյարդաքայքայիչ) բուժման համար:  
Ապահովվում է ինտերլեյկին-1-բետա-ով միջնորդված հիվանդությունների ախտահիշների արդյունավետ արգելակումը:

- (51) 7 C09J 4/00 (11) 1342 (13) A2  
C09J 11/04  
C09J 131/08
- (21) P20020060 (22) 25.04.2002  
(42) 16.07.2002
- (71) «Վերականգնում» ՍՊԸ (AM)
- (72) Ալեքսանդր Մելիքսեթյան (AM), Նինել Գուրգենյան (AM), Հրանտ Բաբայան (AM)
- (73) «Վերականգնում» ՍՊԸ, Վանաձոր, Գ. Լուսավորչի 25/1 (AM)
- (54) Բազմաթերային սոսնձի պատրաստման տեխնոլոգիական գիծ
- (57) Գյուտը վերաբերում է սոսնձների պատրաստման տեխնոլոգիական գծերին եւ կարող է օգտագործվել շինարարական կառուցատարրերի, բնական եւ արհեստական քարերի սոսնձման բաղադրանյութերի ստացման համար:

Բազմաթերային սոսնձի պատրաստման տեխնոլոգիական գիծը ներառում է պնդարարի, արագարարի եւ անօրգանական լցիչի չափաբաժնավորիչ ունեցող զետեղարաններ, սոսնձախառնիչներ, քարջարդիչ սարք, քարմաղ, ջարդոնի նախնական չորացման վառարան, զնդավոր աղաց եւ պատրաստի սոսնձի ընդունարան, ընդ որում անօրգանական լցիչի եւ ցեոլիթի խոշոր մասնիկների վերադարձման նպատակով քարմաղը միացված է զնդավոր աղացին:

Բարձրանում է արտադրողականությունը, բարելավվում են սոսնձի ֆիզիկամեխանիկական հատկությունները, նկ.1:

- (51) 7 C10M 101/02 (11) 1343 (13) A2  
(21) P20020177 (22) 01.11.2002  
(42) 17.01.2003
- (71) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (AM)
- (72) Ալբերտ Պողոսյան (AM), Վիկտոր Մակարյան (AM), Տիգրան Մարտիրոսյան (AM)
- (73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երևան, Տերյան 105 (AM)
- (54) Բենտոնիտային քուլքի ստացման եղանակ
- (57) Գյուտը վերաբերում է քուլքային նյութերին, մասնավորապես՝ բնական հանքային յուղի հիմքով բենտոնիտային քուլքի ստացման եղանակին եւ կարող է կիրառվել մեքենաշինության բնագավառում սահքի եւ գլորման շփման բարձրաբեռնված հանգույցների յուղման համար:

Քուլքը պատրաստում են երկու փուլով՝ առաջին փուլում բենտոնիտը խառնում են հանքային յուղի հետ 90°C ջերմաստիճանում, ապա խառնուրդին հաղորդում 0,5-2,0 կՅց

հաճախությամբ թրթռում 6-10 րոպեի ընթացքում:Ստացված խառնուրդը երկրորդ փուլում սառեցնում են մինչեւ սենյակային ջերմաստիճան եւ, շարունակելով խառնել, հաղորդում ավելի բարձր՝ 18-22 կՅց հաճախությամբ թրթռում 25-30 րոպեի ընթացքում: Ընդ որում բենտոնիտի եւ յուղի զանգվածների հարաբերակցությունը խառնուրդում առաջին փուլում 1:2 է, իսկ երկրորդ փուլում 1:4:

Բարձրանում է տեխնոլոգիական պրոցեսի անվտանգությունը, 1 նկ.:

- (51) 7 C12M 1/04 (11) 1344 (13) A2  
C12N 1/00
- (21) P20020183 (22) 08.11.2002  
(42) 17.02.2003
- (71) Ջանիկ Ճառվչյան (AM)
- (72) Ջանիկ Ճառվչյան (AM)
- (73) Ջանիկ Ճառվչյան, Երեւան, Նորքի 3-րդ զանգվ., Բաղյան 1, բն. 25 (AM)
- (54) Աուտոտրոֆ եւ հետերոտրոֆ միկրոօրգանիզմների կենսազանգվածների համատեղ ստացման եղանակ եւ կայանք դրա իրագործման համար
- (57) Գյուտը վերաբերում է կենսատեխնոլոգիային եւ կարող է օգտագործվել սննդարդյունաբերության եւ դեղագործության մեջ:

Միկրոօրգանիզմների աճեցումը կատարում են կուլտիվատորներում՝ հեղուկ սնուցիչ միջավայրում: Միկրոօրգանիզմները աճեցնում են գազերի խառնուրդի եւ արեւային էներգիայից ստացված խտացված լուսային էներգիայի մատուցմամբ, որոնք բաշխվում են բջջային կախույթի ամբողջ ծավալով հավասարապես: Իսկ հետերոտրոֆ միկրոօրգանիզմները աճեցնում են գազերի խառնուրդի եւ շաքարային սննդանյութի մատուցմամբ, որոնք բաշխվում են բջջային կախույթի ամբողջ ծավալով հավասարապես:

Կայանքն իրականացված է երեք հատվածամասի բաժանված ծավալի տեսքով: Առաջինում տեղակայված է միկրոօրգանիզմների աճեցման եւ թթվածնի ստացման կուլտիվատորը, երկրորդում՝ հետերոտրոֆ միկրոօրգանիզմների աճեցման եւ ածխաթթու գազի ստացման կուլտիվատորը, իսկ երրորդում՝ շաքարով հարուստ արմատապտուղների կենսազանգվածի, ածխաթթու գազի եւ թթվածնի ստացման կուլտիվատորը: Ընդ որում միկրոօրգանիզմների կուլտիվատորներն իրականացված են հորիզոնական առանցքով գլանատակառների տեսքով եւ ունեն իրենց համառանցք պտտվելու հնարավորությամբ սնամեջ լիսեռ եւ լիսեռին ամրակցված շառավղային թելեր, որոնց վրա ամբողջ երկայնքով կան շառավղային անցքեր:

Բարձրացվում է միկրոօրգանիզմների կենսազանգվածի ստացման արտադրողականությունը, ապահովվում է անթափոն արտադրությունը, 2 անկախ կետ, 1 նկ.:

- (51) 7 D03D 29/00 (11) 1345 (13) A2
- (21) P20020208 (22) 05.12.2002
- (42) 17.02.2003
- (71) Գագիկ Կարապետյան (AM)
- (72) Գագիկ Կարապետյան (AM)
- (73) Գագիկ Կարապետյան, Երևան, Բաշին-ջաղյան 121 (AM)
- (54) Ձեռքի գորգագործական հաստոց
- (57) Գյուտը վերաբերում է ձեռքի գորգագործական հաստոցներին:

Հաստոցն ունի իրան, հենքի թելերի փաթաթման մեխանիզմ, հենքի փաթաթումից հետո աշխատանքային լիսեռների աշխատանքային դիրքի վերադասավորման մեխանիզմ, հենքի թելերը աշխատանքային գոտի մատուցող մեխանիզմ, կենտրոնական հորիզոնական լիսեռ եւ նրան միացված պտտվող շրջանակ: Շրջանակի հետ հողավորված են պտտման առանցքին զուգահեռ տեղափոխվելու հնարավորությամբ մեկ զույգ աշխատանքային լիսեռ եւ մեկ զույգ ձգիչ հոլովակ: Հենքի թելերի փաթաթման անհրաժեշտ քայլը ապահովվում է կենտրոնական լիսեռի եւ փաթաթող մեխանիզմի ընթացային պտուտակի միջեւ եղած կինեմատիկական շղթայի փոխանցման հարաբերության փոփոխմամբ: Հաստոցի մեխանիզմները փոխգործողության մեջ են գտնվում շրջանակի եւ աշխատանքային լիսեռների հետ:

Ապահովվում է հենքի թելերի հավասարաչափ փաթաթումը, բարձրացվում է հուսալիությունը, 3 նկ.:

- (51) 7 E02D 1/00 (11) 1346 (13) A2
- G01N 3/24
- G01N 33/24
- (21) P20020196 (22) 21.11.2002
- (42) 17.01.2003
- (71) Ստեփան Մեսչյան (AM)
- (72) Ստեփան Մեսչյան (AM)
- (73) Ստեփան Մեսչյան, Երևան, Լենինգրադյան 2, բն. 8 (AM)
- (54) Գետնահողերի մեխանիկական եւ հոսքաբանական բնութագրերի որոշման կայանք
- (57) Գյուտը վերաբերում է շինարարությանը, մասնավորապես մանրահատիկ գետնահողերի մեխանիկական եւ հոսքաբանական բնութագրերի որոշման կայանքներին եւ կարող է կի-

րառվել ինժեներա-երկրաբանական հետազոտություններում:

Գետնահողերի մեխանիկական եւ հոսքաբանական բնութագրերի որոշման կայանքն ունի հենոց, պարփակ շրջանակ, ուղղաձիգ ճիգի ու ոլորող մոմենտի ստեղծման մեխանիզմներ, աշխատանքային օրգան և չափիչ գործիքներ: Ոլորող մեխանիզմների սկավառակները հորիզոնական ճիգի ուժաչափի միջոցով ձգաճուպաններով միացված են հորիզոնական ճիգի կառավարման հանգույցին:

Ապահովվում է մանրահատիկ եւ խոշորաբեկոր գետնահողերի գագաթնային ու մնացորդային ամրությունների որոշումը նմուշների փորձարկման տարբեր արագությունների դեպքում, նկ.4:

- (51) 7 E05B 37/20 (11) 1347 (13) A2
- (21) P20020103 (22) 11.06.2002
- (42) 16.09.2002
- (71) Ալբերտ Պողոսյան (AM)
- (72) Ալբերտ Պողոսյան (AM)
- (73) Ալբերտ Պողոսյան, Երևան, Շիրակի 20, բն. 30 (AM)
- (54) Փականքի գլանային գաղտնիության մեխանիզմ

(57) Գյուտը վերաբերում է փականքներին, մասնավորապես գլանային գաղտնիության մեխանիզմներին: Փականքի գլանային գաղտնիության մեխանիզմն ունի իրան, իրանի մեջ տեղակայված է թմբկազլան, որը կենտրոնական մասում ունի առանցքին ուղղահայաց անցք եւ այդ անցքում տեղաշարժվելու հնարավորությամբ տեղակայված բույթ եւ նիզը տանող պտտվող տարր: Թմբկազլանի առանցքային անցքում՝ բույթի հակառակ կողմերում, տեղակայված են առանցքային ուղղությամբ տեղաշարժվելու հնարավորությամբ միջուկներ: Թմբկազլանի առանցքին ուղղահայաց անցքի մեջ տեղակայված են երկու զսպանակած զուգահեռ բույթեր, որոնք ունեն համապատասխան միջուկի աշխատանքային ծայրի հետ համագործակցելու հնարավորություն, իսկ թմբկազլանի ճակատային մասերում կատարված են բանալու հետ համագործման ուղղանկյուն ակոսներ:

Ավելացվում է շահագործման հնարավորությունը, բարձրանում է օգտագործման հուսալիությունը, 3 նկ.:

- (51) 7 G01N 21/76 (11) 1348 (13) A2
- (21) P20020168 (22) 09.10.2002
- (42) 17.01.2003

- (71) Արմեն Ջաքարյան (AM), Գայանե Պողոսյան (AM), Տիգրան Ղարազյոզյան (AM), Միքայել Թունյան (AM), Միքայել Աղաջանյան (AM), Էդուարդ Սեկոյան (AM), Արման Պետրոսյան (AM)
- (72) Արմեն Ջաքարյան (AM), Գայանե Պողոսյան (AM), Տիգրան Ղարազյոզյան (AM), Միքայել Թունյան (AM), Միքայել Աղաջանյան (AM), Էդուարդ Սեկոյան (AM), Արման Պետրոսյան (AM)
- (73) Արմեն Ջաքարյան, Երեւան, Մարգարյանի 2-րդ փող. 1, բն.46 (AM), Գայանե Պողոսյան, Երեւան, Կոմիտասի 9/1, բն.37-38 (AM), Տիգրան Ղարազյոզյան, Երեւան, Նոր Արեշի 22-րդ փող. 82 (AM), Միքայել Թունյան, Երեւան, Ն.Նորքի 2-րդ զանգված 90, բն. 9 (AM), Միքայել Աղաջանյան, Երեւան, Չերացու 18, բն.34 (AM), Էդուարդ Սեկոյան, Երեւան, Մաշտոցի 1, բն.46 (AM), Արման Պետրոսյան, Երեւան, Դավթաշենի 4-րդ փող. 16, բն.16 (AM)
- (54) Տարբեր աստիճանի ծանրության պարօղոն-տիտների ախտորոշման եղանակ
- (57) Գյուտը վերաբերում է պարօղոնտոլոգիային, մասնավորապես, տարբեր աստիճանի ծանրության պարօղոնտիտների ախտորոշման եղանակներին:

Առողջ մարդու չորացված թքից ստացված թաղանթի ֆոտոքիմիկալները ստացված ինտենսիվությունը 300իմպուլս/10վայրկյան է (տեսանելի լույսի պայմաններում) եւ 370իմպուլս/10վայրկյան (անդրամանուշակագույն լույսի պայմաններում): Պարօղոնտիտներով հիվանդների չորացված թքի ստացված թաղանթների ֆոտոքիմիկալները ստացված արժեքները տարբերվում են նորմայից, եւ այդ տարբերությունը հնարավորություն է տալիս ախտորոշելու տարբեր աստիճանի ծանրության պարօղոնտիտներ:

Ապահովվում է պարօղոնտիտների ախտորոշման արդյունավետությունը պարօղոնտի հյուսվածքների կլինիկական վիճակի վերաբերյալ հավաստի եւ վստահելի տեղակատվության ստացման միջոցով:

(51) 7 G03C 11/24 (11) 1349 (13) A2  
 (21) P20020175 (22) 30.10.2002  
 (42) 17.01.2003

- (71) Արծրունի Սաֆարյան (AM)
- (72) Արծրունի Սաֆարյան (AM), Սամվել Մուրադյան (AM)
- (73) Արծրունի Սաֆարյան, Երեւան, Ներսիսյան 1, բն.100 (AM)
- (54) Արծաթահալոգենային լուսանկարչական էմուլսային ջրերից արծաթ պարունակող շլամի անջատման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է լուսանկարչական էմուլսային ջրերի մշակման եղանակներին, մասնավորապես՝ արծաթ պարունակող շլամի անջատմանը:

Լուսանկարչական էմուլսային ջուրը 40-60°C ջերմաստիճանում մշակում են նատրիումի հիպոքլորիտով՝ ջրում պարունակվող 1 գրամ արծաթի հաշվարկով 100-120 մլ քանակությամբ,որից հետո ստացված խյուսը բաժանում են պինդ եւ հեղուկ ֆազաների:

Պարզեցվում է եղանակը, կրճատվում են օգտագործվող քիմիական նյութերի ծախսերը:

(51) 7 G06G 7/26 (11) 1350 (13) A2  
 (21) P20020178 (22) 01.11.2002  
 (42) 17.01.2003

- (71) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (AM)
- (72) Արշակ Շաղգամյան (AM)
- (73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երևան, Տերյան 105 (AM)
- (54) Ֆունկցիոնալ թվանշանաանալոգային կերպափոխիչ
- (57) Գյուտը վերաբերում է հաշվողական եւ չափիչ տեխնիկայի բնագավառներին եւ կարող է օգտագործվել թվանշանային կողը տրված ֆունկցիայով հաստատուն հոսանքի լարման կերպափոխելու համար, ընդ որում թվանշանային կողը հանդիսանում է այդ ֆունկցիայի արգումենտը:

Սարքում, որն ունի մուտքային կողի հիշման բլոկ, կողային կառավարմամբ հենանիշային լարումների երկու բլոկ եւ գծային թվանշանաանալոգային կերպափոխիչ, գյուտի համաձայն մուտքային կողի հիշման բլոկի առաջին ելքը միացված է գծային թվանշանաանալոգային կերպափոխիչի ինֆորմացիոն մուտքին, իսկ երկրորդ ելքը՝ հենանիշային լարումների բլոկների կառավարման մուտքերին: Հենանիշային լարումների բլոկները գալվանապես առանձնացված են եւ նրանցից առաջինի ելքը միացված է գծային թվանշանաանալոգային կերպափոխիչի լարման մուտքին, իսկ նրա ընդհանուր կետը միացված է գծային թվանշանաանալոգային կերպափոխիչի ընդհանուր կետին եւ երկրորդ հենանիշային լարման բլոկի ելքին:

Բարձրացվում են կերպափոխման արագագործությունը եւ ճշգրտությունը, 2 նկ.:

(51) 7 H01M 6/52 (11) 1351 (13) A2  
 (21) P20020209 (22) 06.12.2002  
 (42) 17.02.2003

- (71) Արկադի Կուրիսկո (AM), Յրանտ Յախնա-գարյան (AM)
- (72) Արկադի Կուրիսկո (AM), Յրանտ Յախնա-գարյան (AM)
- (73) Արկադի Կուրիսկո, Երեւան, Ռուբինյանց 1, բն.8 (AM), Յրանտ Յախնագարյան, Երեւան, Սարյան 20/1, բն.69 (AM)
- (54) Գալվանական տարրերի լիցքավորման եղանակ
- (57) Գյուտը վերաբերում է էլեկտրատեխնիկային, մասնավորապես, սնուցման ռետուրը սպառած գալվանական տարրերի լիցքավորմանը:

Գյուտի համաձայն լիցքավորման ենթակա գալվանական տարրերը տեղավորում են սնամեջ, քառանկյուն հիմքով, ոչ մետաղական նյութից պատրաստված եւ նիստերը ներսի կողմից մետաղաթաղանթով պատված հատած բուրգի մեջ: Բուրգը դիրքորոշում են հիմքի կողմերը երկրի աշխարհագրական ուղղություններով: Լիցքավորվող տարրերը բուրգի մեջ պահում են 48-72 ժամվա ընթացքում:

Ապահովվում է գալվանական տարրի պտենցիալի վերականգնում:

- (51) 7 H02K 33/00 (11) 1352 (13) A2
- (21) P20020129 (22) 10.07.2002
- (42) 15.11.2002
- (71) Յրաչիկ Շամիրյան (RU)
- (72) Յրաչիկ Շամիրյան (RU)
- (73) Յրաչիկ Շամիրյան, ՌԴ, Վոլգոգրադ, Սկոսիրելի 1բ, հանրակացարան 2, մասնաշենք 4 (RU)

(54) Էլեկտրամագնիսական շարժիչ  
 (57) Գյուտը վերաբերում է մեքենաշինության բնագավառին, մասնավորապես՝ մագնիսական էներգիան մեխանիկական շարժման կերպափոխող սարքերին, եւ կարող է օգտագործվել արդյունաբերության տարբեր ոլորտներում:

Շարժիչն ունի իրանում տեղադրված տանող ծնկավոր լիսեռ, նրան միացված շարժաթելեր, որոնք միացված են չորս գլանաձեւ պարկուճների մեջ գտնվող գլանաձեւ մխոցներին: Շարժիչն ունի նաեւ երկու աշխատանքային գլան, որոնց մեջ տեղադրված են չորսծնկանի լիսեռներ: Այդ լիսեռների վրա կան զսպանակավոր էլեկտրական խրոցակներ, իսկ ծնկներից յուրաքանչյուրում՝ բեռ բարձրացնող էլեկտրամագնիս: Տանող լիսեռի եւ չորսծնկանի լիսեռների ծայրերից մեկին տեղադրված են ատամնանիվներ, որոնց յուրաքանչյուր ատամի վրա տեղադրված է հաստատուն մագնիս: Տանող լիսեռի ծայրին տեղադրված է թափանիվ, որը կառչման մեջ է իրանին ամրացված էլեկտրական մեկնարկիչի հետ:

Տանող լիսեռի վրա լրացուցիչ միջակա ատամնանվի միջոցով տեղադրված է պտտող միջակա լիսեռ:

Բարձրացվում է մագնիսական էներգիայի մեխանիկական շարժման կերպափոխման արդյունավետությունը, 8 նկ.:

- (51) 7 H02K 33/00 (11) 1353 (13) A2
- (21) P20020128 (22) 10.07.2002
- (42) 15.11.2002
- (71) Յրաչիկ Շամիրյան (RU)
- (72) Յրաչիկ Շամիրյան (RU)
- (73) Յրաչիկ Շամիրյան, ՌԴ, Վոլգոգրադ, Սկոսիրելի 1բ, հանրակացարան 2, մասնաշենք 4 (RU)

(54) Էլեկտրամագնիսական շարժիչ  
 (57) Գյուտը վերաբերում է մեքենաշինության բնագավառին, մասնավորապես՝ մագնիսական էներգիան մեխանիկական շարժման կերպափոխող սարքերին, եւ կարող է օգտագործվել արդյունաբերության տարբեր ոլորտներում:

Շարժիչն ունի իրանում տեղադրված տանող ծնկավոր լիսեռ, նրան միացված շարժաթելեր, որոնք միացված են չորս գլանաձեւ պարկուճների մեջ գտնվող գլանաձեւ մխոցներին: Շարժիչն ունի նաեւ երկու աշխատանքային գլան, որոնց մեջ տեղադրված են չորսծնկանի լիսեռներ: Այդ լիսեռների վրա կան զսպանակավոր էլեկտրական խրոցակներ, իսկ ծնկներից յուրաքանչյուրում՝ բեռ բարձրացնող էլեկտրամագնիս: Տանող լիսեռի եւ չորսծնկանի լիսեռների ծայրերից մեկին տեղադրված են ատամնանիվներ, որոնք միմյանց հետ կառչման մեջ է շղթայավոր փոխանցիչի միջոցով: Տանող լիսեռի արտաքին ծայրին տեղադրված է թափանիվ, որը կառչման մեջ է իրանին ամրացված էլեկտրական մեկնարկիչի հետ: Տանող լիսեռի վրա լրացուցիչ միջակա ատամնանվի միջոցով տեղադրված է պտտող միջակա լիսեռ:

Բարձրացվում է մագնիսական էներգիայի մեխանիկական շարժման կերպափոխման արդյունավետությունը, 6 նկ.:

- (51) 7 H02N 1/08 (11) 1354 (13) A2
- (21) P20020176 (22) 01.11.2002
- (42) 17.01.2003
- (71) Յայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (AM)
- (72) Գեորգի Արեշյան (AM), Անտոն Մայիլյան (AM), Վարդգես Մայիլյան (AM)
- (73) Յայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երևան, Տերյան 105 (AM)

(54) Ունակային սինքրոն գեներատոր  
 (57) Գյուտը վերաբերում է էլեկտրական մեքենաներին և կարող է կիրառվել կենցաղային և հատուկ տեխնիկայում, որտեղ առաջնակարգ նշանակություն ունեն գեներատորի ելքային պարամետրերի կառավարումը կայունացված եւ անցումային պրոցեսների ժամանակ:

Ունակային սինքրոն գեներատորն ունի մետաղական ֆազային էլեկտրողներով ստատոր եւ գրգռման հիմնական ու լրացուցիչ մետաղական էլեկտրողներով ռոտոր, որի գրգռման հիմնական էլեկտրողներն իրագործված են երկու զույգ էլեկտրողների ձեւով, ընդ որում մեկ զույգը տեղակայված է երկայնական, իսկ մյուսը՝ լայնական առանցքներով եւ միացած են երկու անկախ հոսանքի աղբյուրներին, 1 նկ.:

(51) 7 H02N 11/00 (11) 1355 (13) A2  
 (21) P20020131 (22) 10.07.2002  
 (42) 15.11.2002  
 (71) Հրաչիկ Շամիրյան (RU)  
 (72) Հրաչիկ Շամիրյան (RU)  
 (73) Հրաչիկ Շամիրյան, ՌԴ, Վոլգոգրադ, Սկոսիրելի 1բ, հանրակացարան 2, մասնաշենք 4 (RU)

(54) էլեկտրամագնիսական շարժիչ  
 (57) Գյուտը վերաբերում է մեքենաշինության բնագավառին, մասնավորապես՝ մագնիսական էներգիան մեխանիկական շարժման կերպափոխող սարքերին, եւ կարող է օգտագործվել արդյունաբերության տարբեր ոլորտներում:

Շարժիչն ունի իրանում տեղադրված տանող ծնկավոր լիսեռ, նրան միացված շարժաթելեր, որոնք միացված են չորս գլանաձեւ պարկուճների մեջ գտնվող գլանաձեւ մխոցներին: Շարժիչն ունի նաեւ երկու աշխատանքային գլան, որոնց մեջ տեղադրված են չորսծնկանի լիսեռներ: Այդ լիսեռների վրա կան զսպանակավոր էլեկտրական խրոցակներ, ծնկներից յուրաքանչյուրում՝ բեռ բարձրացնող էլեկտրամագնիս, իսկ ծնկների վրա ամրացված է կիսալուսնաձեւ մագնիս: Տանող լիսեռի եւ չորսծնկանի լիսեռների ծայրերից մեկին տեղադրված են ատամնանիվներ, որոնք միմյանց հետ կառչման մեջ են շղթայավոր փոխանցիչի միջոցով: Տանող լիսեռի ծայրին տեղադրված է թափանիվ, որը կառչման մեջ է իրանին ամրացված էլեկտրական մեկնարկիչի հետ: Տանող լիսեռի վրա լրացուցիչ միջակա ատամնանվի միջոցով տեղադրված է պտտող միջակա լիսեռ:

Բարձրացվում է մագնիսական էներգիայի մեխանիկական շարժման կերպափոխման արդյունավետությունը, 10 նկ.:

(51) 7 H02N 11/00 (11) 1356 (13) A2  
 (21) P20020182 (22) 08.11.2002  
 (42) 17.01.2003  
 (71) Հրաչիկ Շամիրյան (RU)  
 (72) Հրաչիկ Շամիրյան (RU)  
 (73) Հրաչիկ Շամիրյան, ՌԴ, Վոլգոգրադ, Սկոսիրելի 1բ, հանրակացարան 2, մասնաշենք 4 (RU)

(54) էլեկտրամագնիսական շարժիչ  
 (57) Գյուտը վերաբերում է մեքենաշինության բնագավառին, մասնավորապես՝ մագնիսական էներգիան մեխանիկական շարժման կերպափոխող սարքերին եւ կարող է օգտագործվել արդյունաբերության տարբեր ոլորտներում:

էլեկտրամագնիսական շարժիչում, որն ունի իրանի մեջ տեղադրված ոչ մագնիսական լիսեռ, որը հենված է օղակաձեւ վահանների առանցքակալների վրա, բեռ բարձրացնող էլեկտրամագնիսներ, որոնց վրա կան լրացուցիչ հաստատուն մագնիսներ, որոնց միանշան բեւեռներն ուղղված են լիսեռի վրա տեղադրված հաստատուն մագնիսների նույնանշան բեւեռներին, զսպանակավոր էլեկտրական խրոցակներ եւ էլեկտրական մեկնարկիչ, որը կառչման մեջ է ատամնանիվի հետ, գյուտի համաձայն լիսեռի հաստատուն մագնիսները տեղադրված են իրարից հավասար հեռավորություն ունեցող երկայնական փորվածքների մեջ: Բեռ բարձրացնող էլեկտրամագնիսներն ունեն կափարիչներ եւ անշարժ տեղադրված են իրանի ներսի մակերեսային: Օղակաձեւ վահաններից մեկն ունի գլանաձեւ կցաշուրթ, որի վրա տեղադրված է էլեկտրական մեկնարկիչը, իսկ զսպանակավոր էլեկտրական խրոցակները տեղադրված են լիսեռի եւ կցաշուրթի միջև:

Բարձրացվում է էլեկտրամագնիսական շարժիչի օգտակար գործողության գործակիցը, 6 նկ.:

(51) 7 H02N 11/00 (11) 1357 (13) A2  
 (21) P20020130 (22) 10.07.2002  
 (42) 15.11.2002  
 (71) Հրաչիկ Շամիրյան (RU)  
 (72) Հրաչիկ Շամիրյան (RU)  
 (73) Հրաչիկ Շամիրյան, ՌԴ, Վոլգոգրադ, Սկոսիրելի 1բ, հանրակացարան 2, մասնաշենք 4 (RU)

(54) էլեկտրամագնիսական շարժիչ  
 (57) Գյուտը վերաբերում է մեքենաշինության բնագավառին, մասնավորապես՝ մագնիսական էներգիան մեխանիկական շարժման կերպափոխող սարքերին, եւ կարող է օգտագործվել արդյունաբերության տարբեր ոլորտներում:

Շարժիչն ունի իրանում տեղադրված տանող ծնկավոր լիսեռ, նրան միացված շարժաթելեր,



որոնք միացված են չորս գլանաձև պարկուճների մեջ գտնվող գլանաձև մխոցներին: Շարժիչն ունի նաև երկու աշխատանքային գլան, որոնց մեջ տեղադրված են չորսձևկանի լիսեռներ: Այդ լիսեռների վրա կան զսպանակավոր էլեկտրական խրոցակներ, ծնկներից յուրաքանչյուրում՝ բեռ բարձրացնող էլեկտրամագնիս, իսկ ծնկների վրա ամրացված է կիսալուսնաձև մագնիս: Տանող լիսեռի եւ չորսձևկանի լիսեռների ծայրերից մեկին տեղադրված են ատամնանիվներ, որոնց յուրաքանչյուր ատամի վրա տեղադրված է հաստատուն մագնիս: Տանող լիսեռի ծայրին տեղադրված է թափանիվ, որի ատամները կառչման մեջ են կենտրոնական իրանին ամրացված էլեկտրական մեկնարկիչի ատամների հետ: Տանող լիսեռի վրա լրացուցիչ միջակա ատամնանվի միջոցով տեղադրված է պտտող միջակա լիսեռ:

Բարձրացվում է մագնիսական էներգիայի մեխանիկական շարժման կերպափոխման արդյունավետությունը, 12 նկ.:

(51) 7 H04N 7/00  
(21) P20020186  
(42) 17.01.2003

(11) 1358 (13) A2  
(22) 13.11.2002

(71) Կարեն Գրիգորյան (AM)

(72) Կարեն Գրիգորյան (AM)

(73) Կարեն Գրիգորյան (AM)

(74) Ա. Պետրոսյան

(54) Համացուցային պատկերի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է հեռուստատեսային համակարգերին և կարող է կիրառվել ինչպես լայնահազորային, այնպես էլ տեղային ցանցերում:

Ըստ եղանակի տեսահիմֆորմացիան պրոյեկտում են կիսագնդաձև լուսադիտարկային էկրանի ներքին մակերեսույթի վրա, լրացուցիչ կատարում են վերարտադրվող օբյեկտի վերին տեսանկյունային տեսահիմֆորմացիայի հաղորդում-ընդունում եւ դրա հետագա պրոյեկտում կիսագնդաձև էկրանի վերին հատվածամասի վրա: Տեսաընդունիչ խցիկները տեղակայում են պատկերվող օբյեկտի շուրջն այնպես, որ դրանք ընդգրկեն օբյեկտը 360 աստիճանով հորիզոնական հարթության եւ 180 աստիճանով ուղղաձիգ հարթության մեջ:

Բարձրանում է օբյեկտի ինֆորմացիոն լրիվությունը, 2նկ. :

**ՕԳՏԱԿԱՐ  
ՄՈԴԵԼՆԵՐ**

**Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական  
տվյալների նույնականացման միջազգային  
կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

- 11 *արտոնագրի համարը*
- 13 *փաստաթղթի տեսակի կոդը*  
*U* *օգտակար մոդելի արտոնագիր*
- 21 *հայտի համարը*
- 22 *հայտի ներկայացման թվականը*
- 23 *լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն*
- 31 *առաջնային հայտի համարը*
- 32 *առաջնային հայտի ներկայացման թվականը*
- 33 *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը*
- 45 *օգտակար մոդելի արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 51 *միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
- 54 *օգտակար մոդելի անվանումը*
- 56 *տեղեկատվության աղբյուրներ*
- 57 *ռեֆերատը*
- 62 *ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
- 71 *հայտատուն, երկրի կոդը*
- 72 *օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը*
- 73 *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
- 74 *արտոնագրային հավատարմատար*
- 85 *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
- 86 *միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը*
- 87 *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը*
-

## Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) 7 B65D 1/02 (11) 69 (13) U  
 (21) U20030012 (22) 07.02.2003  
 (31) 2002119502 (32) 10.07.2002 (33) RU  
 (71) «ԲՐԱՎՈ» Ինթերնեշնլ ՍՊԸ (RU)  
 (72) Նիկիտա Շումիլին (RU)  
 (73) «ԲՐԱՎՈ» Ինթերնեշնլ ՍՊԸ, Ռուսաստան,  
 Սանկտ-Պետերբուրգ, Վիբորգսկոե խճուղի  
 (RU)  
 (54) Շիշ  
 (57) Օգտակար մոդելը վերաբերում է տարայի  
 կառուցվածքին, մասնավորապես՝ ապակե  
 տարային եւ կարող է օգտագործվել ընպելիքների  
 շշալցման համար:  
 Շիշն ունի պսակով վզիկ, որը կատարված  
 է լայնացումով դեպի թեք ուսերը, ընդ որում  
 ուսերի մակերեսույթը վզիկի հետ լծորդման  
 մասում կատարված է գոգավոր՝ 20,0 մմ կո  
 ռության շառավղով եւ պիտակի համար խորա  
 ցում ունեցող գլանաձեւ իրան, որը լծորդված է

հատակի հետ 27,0 մմ կորության շառավղով, ընդ  
 որում ուսերի մակերեսույթը գլանաձեւ իրանի  
 հետ լծորդման մասում կատարված է ուռուցիկ՝  
 44,0 մմ կորության շառավղով: Ուսերը գլանաձեւ  
 իրանի հետ եւ իրանը հատակի հետ լծորդման  
 մասերում ունեն 4,0 մմ երկարությամբ անցման  
 գոգավոր հատվածներ, ընդ որում գլանաձեւ  
 իրանի հատակը գոգավոր է: Շիշ գաբարիտային  
 բարձրությունը 271,1–273,0 մմ է, իսկ գլանաձեւ  
 իրանի տրամագիծը եւ բարձրությունը բավարա  
 րում են հետեւյալ արտահայտությանը.

